ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ / ԳՈՒՄ ՀԿ

PARTNERSHIP & TEACHING NGO

N - 2302
«15» օգոստոս, 2024թ.

Հասցե՝ ք. Գորիս, Անկախության 3
Հեռ. 077231703
E- mail infogumiso@gmail.com
Web site www.gumiso.am

Գորիս համայնքի ղեկավար
Առուշ Առուշանյանին

Հարգելի պարոն Առուշանյան,

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ի և Գորիսի Համայնքապետարանի միջև 2019թ նոյեմբերի 29-ին կնքված Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի համաձայն՝ ԳՈՒՄ ՀԿ-ին է տրամադրվել Գորիս համայնքի Գորիս քաղաքի Անկախության փողոցի թիվ 3 վարչական շենքի 1-ին հարկից 124.4 քմ ընդհանուր մակերեսով տարածքը՝ 5 տարի ժամկետով:

Վերոնշյալ տարածքը կազմակերպությանն է տրամադրվել որպես գրասենյակային տարածք: Սակայն 2020թ-ի դեկտեմբերին՝ 44-օրյա պատերազմից անմիջապես հետո, ԳՈՒՄ ՀԿ-ն իր գրասենյակային տարածքում հիմադրել է «Բարեկամ» երեխաների, երիտասարդների և ընտանիքների աջակցման համայնքային կենտրոնը՝ արցախցիներին բազմաբնույթ աջակցությունների տրամադրման և նրանց ինտեգրման նպատակով: Մինչև 2023թ-ը նշված տարածքում կազմակերպվել և իրականացվել է թե՛ ԳՈՒՄ ՀԿ-ի, թե՛ «Բարեկամ» կենտրոնի աշխատանքները: Սակայն 2023թ-ի սեպտեմբերին արցախահայության բռնի տեղահանությունից հետո կենտրոնի գործունեության ծավալների ընդլայնմամբ պայմանավորված, ԳՈՒՄ ՀԿ-ն դադարել է աշխատել նույն տարածքում և տեղափոխվել է Մաշտոցի 3 հասցեում գտնվող «Գորիսի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԳԵՆԿ) –ի տարածք:

Գործունեության նախորդ 4 տարիների ընացքում ԳՈՒՄ ՀԿ-ի «Բարեկամ» կենտրոնի կողմից մատուցվել են հումանիտար, սոցիալ-հոգեբանական, նեղ մասնագիտական և ոչ ֆորմալ կրթական աջակցության ծառայություններ՝ ուղղված և՛ Արցախից բռնի տեղահանված, և՛ տեղացի հարյուրավոր ընտանիքներին և նրանց երեխաներին: Մասնավորապես ձեռք են բերվել հետևյալ արդյունքները՝

- ✓ 650 ընտանիքներ ստացել են վաուչերային աջակցություն
- ✓ 250 ընտանիք ստացել է կանխիկ դրամական աջակցություն

- ✓ 800-ից ընտանիքներ ստացել են հումանիտար աջակցության փաթեթներ:
- ✓ 700-ից ավել երեխաներ ստացել են գրենական աջակցության փաթեթներ:
- ✓ 2200 երեխաներ ներգրավվել են ոչ ֆորմալ կրթության ու ժամանցի ապահովման խմբակներում:
- ✓ 250-ից ավելի երեխաներ ստացել են մասնագիտական կողմնորոշում:
- ✓ 70 երեխաներ ստացել են լոգոպեդի մասնագիտական աջակցություն:
- ✓ 30 հաշմանդամություն և 50 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ ստացել են նեղ մասնագիտական աջակցություն (հոգեբան, լոգոպեդ, ֆիզիոթերապևտ, հատուկ մանկավարժ):
- ✓ 13 երեխաների մուտքը հատուկ հաստատություններ կանխարգելվել է:
- ✓ 400-ից ավել ծնողներ ներգրավվել են ծնողական կրթության դասընթացներում:

2021թ-ին կենտրոնը հավասագրվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ որպես Երեխաների խնամքը սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում իրականացնող կազմակերպություն:

Ներկայումս կազմակերպությունը մատուցում է սոցիալ-հոգեբանական, հաշմանդամություն ունեցող երեխաներին նեղ մասնագիտական, (հոգեբանի, լոգոպեդի, հատուկ մանկավարժի) ոչ ֆորմալ կրթության, ժամանցի և ծնողական կրթության ծառայություններ՝ շեշտադրելով մասնավորապես կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին վերոնշյալ ծառայությունների մատուցումը:

ԳՈՒՄ ՀԿ-ն իր գործունեության ու կենտրոնի շրջանակում մատուցվող ծառայությունների ընթացքում ակտիվ համագործակցություն է ձևավորել շահագրգիռ կողմերի հետ՝ տեղական, ազգային և միջազգային մակարդակներում:

ԳՈՒՄ ՀԿ-ն նախորդ 5 տարիների ընթացքում ապահովել է տրամադրված տարածքի վերանորոգման, շարունակական թարմացումների, տեխնիկական ապահովման հարցերը՝ ներդնելով ավելի քան 6 մլն. դրամ:

Հաշվի առնելով վերոնշյալ իրողությունները՝ սույն գրությամբ դիմում ենք Ձեզ՝

1. Գորիսի Անխախության փողոցի թիվ 3 վարչական շենքի 1-ին հարկից 124.4քմ ընդհանուր մակերեսով տարածքը անհատույց տրամադրել ԳՈՒՄ ՀԿ-ին՝ «Բարեկամ» կենտրոնի գործունեության շարունակականության ապահովման և կարիքահեն ծառայությունների ներդրման նպատակով:
2. Գորիսի Մաշտոցի 3 հասցեում ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից հիմնադրված Գորիսի Երիտասարդկանա կենտրոնին տրամադրված տարածքը տրամադրել ԳՈՒՄ ՀԿ-ին՝ որպես գրասենյակային տարածք, համապատասխան տարեկան վարձավճարով:

ԳՈՒՄ ՀԿ-ն պարտավորվում է հոգալ նշված տարածքների կոմունալ և տեխնիկական սպասարկման ծախսերը:

ԳՈՒՄ ՀԿ Գործադիր տնօրեն՝ Ա. Տոռոզյան

«ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ ԱՍՄԱՍՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ԱՍՄԱՍՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՄՏԻՑ 3617
15 08 2024 թ.